

ԿՈԴ

050.0311Ն.18.11.14

18 նոյեմբերի 2014 թվականի թիվ 311-Ն

**«ԲԱՑ ԿԱՄ ՄԻՋԱԿԱՅՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ
ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/26 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նպատակ ունենալով սահմանել ներդրումային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման հիմքեր, որոնք կարող են նախատեսվել ֆոնդի կառավարիչների կողմից ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ),

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Բաց կամ միջակայքային ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/26-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2014 թ. նոյեմբերի 20
Երևան

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 311-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/26

«ԲԱՑ ԿԱՄ ՄԻՋԱԿԱՅՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԶԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է բաց կամ միջակայքային ֆոնդի կառավարիչների կողմից փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման այն հիմքերը, որոնք ֆոնդի կառավարիչները կարող են նախատեսել ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ):

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Բաց կամ միջակայքային ֆոնդի կառավարիչը ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կարող է նախատեսել ֆոնդի մասնակիցների շահերը վտանգող ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման միայն հետևյալ հիմքերը.

- 1) **Կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարում կամ շուկայի ձախողումներ (այդ թվում՝ գործարքների կնքման սահմանափակումների կիրառում):** Փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման այս հիմքն առկա է այն ժամանակ, երբ շուկայի վրա ազդում են այնպիսի անկանխատեսելի իրադարձություններ, որոնք խափանում են կարգավորվող շուկայի գործունեության բնականոն ընթացքը և (կամ) առաջացնում են շուկայի ձախողումներ(անկայունություն), որն էլ անհնար է դարձնում ֆոնդի ակտիվների արժեքի ճշգրիտ որոշումը կամ ֆոնդի ակտիվների վաճառքը՝ փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) վճարը փոխհատուցելու համար: Ընդ որում, եթե կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարեցումները, շուկայի ձախողումները չեն ազդում ներդրումային ֆոնդի ակտիվների էական մասի վրա, այս դեպքում

փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցումը կարող է հիմնավորված չլինել:

- 2) **Գործառնական խնդիրների կամ տեխնիկական ձախողումների առաջացում:** Փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման համար հիմք հանդիսացող իրավիճակներ կարող են համարվել գործառնական խնդիրները կամ տեխնիկական ձախողումները, որոնք կարող են ժամանակավորապես խոչընդոտել ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացումը, ուստի՝ ազդել ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա: Բացի այդ, երրորդ անձինք, որոնք գործում են ֆոնդի անունից և հաշվին, նույնպես կարող են առաջացնել կենսաթոշակային ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա ազդող գործառնական խնդիրներ:
- 3) **Իրացվելիության խնդիրների առաջացում:** Փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ այն դեպքերը, երբ ներդրումային ֆոնդում առկա դրամական միջոցները բավարար չեն փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) համար, և ներդրումային ֆոնդի ակտիվները կարող են վաճառվել զգալի կորուստներով:
- 4) **Փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) արդյունքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքը էապես կնվազի և (կամ) կնվազի օրենքով որոշված կարգով նախատեսված ֆոնդի զուտ ակտիվների նվազագույն մեծությունից:**
- 5) **Այլ գործոններ:** Փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ նաև բնական աղետները, ինչպես նաև այն գործոնները, որոնք անհնար են դարձնում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը, ֆոնդի ակտիվների գնահատումը, տնօրինումը և (կամ) դրանց գծով եկամուտների ստացումը: